ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին միջոցառումների կազմակերպման համար դրամաշնորհի հատկացման մրցութային հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 8 նիստի

Նիստին մասնակցում էին մրցութային հանձնաժողովի բոլոր 5-ը անդամները:
Նիստում նախագահում էր մրցութային հանձնաժողովի նախագահ Կ.Մանուկյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ.

1. ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին «Մինասի գույներով» երտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեներ» մշակութային միջոցառման անցկացման համար մրցութային հայտերի բացումը /զեկուցող՝ Ա.Հարությունյան/,
2. Մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամկետի և վայրի մասին /զեկուցող՝ Կ.Մանուկյան/:

Օրակարգի 1-ին հարց – «Մինասի գույներով» երտասարդ նկարիչների միջազգային 9-րդ պլեներ» մշակութային միջոցառման անցկացման համար մրցույթին մասնակցել է 2 կազմակերպություն՝ «Արդինի» կրթամշակութային և տուրիզմի զարգացման և Հայկական կրթամշակութային «Ռեալ արտ» հիմնադրամները: Ներկայացված հայտերը բացվեցին, անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը ստուգվեց, հանձնաժողովի անդամներին տրամադրվեցին ՀՀ Շիրակի մարզպետարանի կնիքով կնքված հայտերի գնահատման թերթիկները և ներկայացված փաթեթների կրկնօրինակները՝ ուսումնասիրելու և գնահատելու համար:
Արտահայտվեցին՝ Կ.Մանուկյանը, Վ. Վարդանյանը, Ա.Նաջարյանը, Լ. Մուրադյանը, Ա. Հարությունյանը:
Որոշեցին՝ հայտերն ուսումնասիրել մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ և գնահատման թերթիկներում համապատասխան նշումներ կատարելու միջոցով տալ հայտի վերաբերյալ եզրակացություն:

Օրակարգի 2-րդ հարց – Կ.Մանուկյանը նշեց, որ նպատակահարմար է մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սեպտեմբերի 16-ին ժամը 15:00-ին ՀՀ Շիրակի մարզպետարանում:
Արտահայտվեցին՝ Վ. Վարդանյանը, Ա.Նաջարյանը, Լ. Մուրադյանը, Ա. Հարությունյանը:
Որոշեցին՝ Մրցութային հանձնաժողովի 9-րդ ամփոփիչ նիստը անցկացնել սեպտեմբերի 23-ին ժամը 15:00-ին ՀՀ Շիրակի մարզպետարանում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա. ՆԱՋԱՐՅԱՆ
Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ